ZEITUNGS-STEMPEL
Kreuzer

№ 121 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21 **1895** ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21 № 121

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծածկելու կարիք չը կայ. Ռէֆօրմների ծրագիրը. Հաւատ դէպի հասարակական ոյժերը. Հայոց հարցը և դիպլօմատիան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արսէն Այտընեանի յոբելեանը. Վրաց գրող Ռափայէլ Էրիստովի յիսնամեայ յօբելեանը. Ժողովրդական գրադարաններ. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աւստրիայից. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իսլամի խալիֆան.

ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՉԸ ԿԱՅ

Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը, հոկտեմբերի 5-ից անմիջապէս յետոյ, դեսպանների թարգմանների միջոցով ստացաւ թէ սուլթանի իրադէն և թէ փոփոխած, բայց վաւերացրած ծրագիրը, սակայն մինչև այսօր էլ այդ դօկումէնտները հրապարակ չեն հանում և գաղտնի են պահում:

Ինչի՞, ի՞նչ նպատակով և ի՞նչ քաղաքական տեսակէտներից դրդված: Եթէ Թիւրքաց բարձր կառավարութիւնը այս կամ այն տեսակէտի վրա հիմնված, հրապարակ չէ դուրս բերում ոչ իրադէն և ոչ էլ վաւերացրած ծրագիրը, այլ նրան պահում է իր դիւանատների գաղտնի պահարաններում,—այդ դեռ չէ նշանակում, թէ հայոց պատրիարքն էլ պէտք է կամ պարտաւոր է ծածկել իր հօտից այդ դօկումէնտները, որոնց ժողովուրդը անհամբեր սպասում է, որոնց բովանդակութեան Թիւրքահայ ժողովուրդը պէտք է տեղեակ լինի, և որոնց բովանդակութիւնից է կախված իսկապէս ժողովրդի խաղաղ կամ անհանգիստ տրամադրութիւնը:

Հոկտեմբերի 5-ից յետոյ հասարակական կարծիքը, և բնականաբար ամենից շատ Թիւրքիայում, ամեն տեսակ ենթադրութիւններ է անում, յատկապէս այն պատճառով, որ թէ սուլթանի իրադէն և թէ փոփոխված ծրագիրը գաղտնի են պահվում, փոխանակ հաղորդելու նրանց ի գիտութիւն ընդհանրութեան:

Եթէ Թիւրքաց բարձր կառավարութիւնը և հայոց պատրիարքարանը, գաղտնի պահելով այդ դօկումէնտները, կարծում են, թէ ոչ ոք նրանց բովանդակութեան մասին տեղեկութիւն չէ կարող ունենալ,—շատ սխալվում են, որովհետև Լօնդօնում արդէն լոյս է տեսել իրադէն, ինչպէս մի ժամանակ լոյս տեսաւ մայիսի 11-ի ծրագիրը, և շուտով լոյս կը տեսնի նոյն իսկ փոփոխած ծրագիրը:

Եւ եթէ մի պաշտօնական, պետական դօկումէնտ, որին անհամբեր սպասում է մի ամբողջ ժողովուրդ, այս կամ այն անուղղակի ճանապարհով լոյս պէտք է տեսնի, աւելի լաւ է, մեր կարծիքով, անմիջապէս, ուղղակի կերպով, պաշտօնական ճանապարհով՝ հրապարակել նրան և դրանով բաւականութիւն տալ ժողովրդական հետաքրքրութեան:

Եթէ Թիւրքաց կառավարութիւնը այդ չարեց, կամ չէ ուզում անել, դա դեռ չէ նշանակում, որ նոյնը պէտք է անի և հայոց պատրիարքարանը, որը պարտաւոր է կատարված գործի մասին տեղեկութիւն տալ իր ժողովրդին:

ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

(Հեռագիր «Daily News»-ի, Կ. Պօլսից)

„Կայսերական խաթթ-հիւմայունը, որով ընդունվում են հայկական ռէֆօրմները, դեռ չէ հրապարակվել և երէկ, հոկտեմբերի 7/19-ին, իբրև ստոյգ լուր հաղորդում էին, որ դիտաւորութիւն չը կայ հրատարակել: Չը հրատարակելու խնդիրը այժմ ենթարկված է դեսպանների քննութեան, և որովհետև նրանք չեն ծածկում իրանց կարծիքը, որ հրատարակութիւնը անհրաժեշտ է, ուստի նրանք իրանց բոլոր ազդեցութիւնը պէտք է գործ դնեն, որ ռէֆօրմների ընդունելութիւնը ծածուկ չը մնայ:

„Պատրիարքին այցելեցին երեք մեծ պետութիւնների դրագօմանները, որոնք ծանուցանելով նրան ի պաշտօնէ սուլթանի համաձայնութիւնը, խնդրեցին նրա կարծիքը այդ մասին: Պատրիարքը պատասխանեց, որ եթէ մեծ պետութիւնները հոգ տանեն, որ իսկապէս ռէֆօրմները մացնվեն, նրա կարծիքով ընդունված ծրագիրը գոհացուցիչ է: Մի և նոյն ժամանակ նա արտայայտեց իր ջերմ շնորհակալութիւնը Անգլիային, Ռուսաստանին և Ֆրանսիային, որ օգնեցին իր հարստահարված ժողովրդին և շեշտեց այն հանգամանքը, որ ամեն բան կախված է նրանից, թէ ինչպէս կը կազմակերպվի ռէֆօրմների վարչութիւնը և քրիստոնեայ Եւրոպայի ներկայացուցիչների վերահսկողութեան գործը:

„Պատրիարքի պատասխանը ճիշդ որոշում է իրերի վիճակը: Եթէ խաթթ-հիւմայունը հրատարակվի և մեծ պետութիւնները պնդեն, որ նա իրողապէս գործադրվի, ծրագիրը լաւ է: Լօրդ Սօլսբէրիի յաւելուածական առաջարկութիւնները վերացվել են: Շաքիր-փաշան պէտք է նշանակվի բարձրագոյն կօմիսար և ունենայ մի քրիստոնեայ օգնական, բայց վալիների նշանակման մասին վէտօ չէ լինելու և ոչ էլ որոշված է նրանց պաշտօնավարութեան ժամանակամիջոցը: Մնացածները համապատասխան են մայիսի 11-ի ծրագրին“:

ՀԱՒԱՏ ԴԷՊԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՅԺԵՐԸ

Այս ձմեռվայ ընթացքում մեր գաւառական քաղաքները կը ստանան ինքնավարութիւն և այդպիսով քաղաքների ազգաբնակութիւնը կարող կը լինի ինքը, իր ընտրեալների միջոցով, հոկել և բարեկարգել քաղաքային տնտեսութեան բոլոր գործերը: Քաղաքի ազգաբնակութեան համար բացվում է ասպարէզ քննադատել իր գործողներին, փոխել անընդունակներին, քաջալերել և խրախուսել անկեղծ և գործունեայ անձնաւորութիւններին և մշակել ու իրագործել ծրագիրներ, որոնք կարող են նպաստել քաղաքի նիւթական բարգաւաճման, բարեկարգութեան և նոյն իսկ մտաւոր զարգացման:

Կառավարութիւնը, յանձնելով քաղաքի ազգաբնակութեանը վարել իր գործերը, յայտնում է իր հաւատը դէպի հասարակական ոյժերը, յոյս ունենալով, որ նրանք կարդարացնեն այդ հաւատը:

Միւս կողմից, երկրագործութեան մինիստրութիւնը քաջալերում է գիւղատնտեսական ընկերութիւնների կազմակերպութիւնը, դիւրացնելով նրանց բացումը, նպաստում է առանձին արդիւնագործական ընկերակցութիւնների հաստատվելուն, հաւատալով, որ միայն հասարակական ոյժով, տեղական ինիցիատիվով և ինքնագործունէութեամբ կարելի է բաւարար կերպով առաջ տանել երկրի տնտեսական զարգացման գործը և այդպիսով օգնել կառավարութեանը՝ իրագործելու իր լայն ծրագիրները՝ պետութեան բարգաւաճումը առաջ տանելու և ընդհանուր հարստութիւնը բարձրացնելու:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ բոլոր հասարակական հիմնարկութիւնների վրա այդպիսով ծանրանում է մի մեծ բարոյական պարտք՝ արդարացնելու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՍԼԱՄԻ ԽԱԼԻՖԱՆ

IV

VI. Թէև սուլթանը իսլամի առաքեալի (Ռէսուլ—այս է Մահմէդի պաշտօնական անունը, և այդ տիտղոսով նրան անուանում է իսլամ աշխարհը) և նրա յաջորդների տեղակալն է, կրօնի գլուխն է, բայց նա իրաւունք չունի կրօնական վճիռներ տալ, ինչպէս տալիս են ուրիշ դաւանանքների կրօնապետները: Խալիֆը զուրանի ու շէրիաթի շաւղից դուրս գալու արտօնութիւն չունի. սխալանքների տեղիք չը տալու համար, հէնց նախկին ամիրապետների ժամանակից, կարգ է դրված, ամեն մի գործ նախապէս յանձնել ամենայայտնի մի քանի իւլէմների վճռին, ջոկ ջոկ, և ապա գործադրել: Խալիֆներն էլ իրանք ում որ ցանկացել են իւլէմներից, նրան են յանձնել գործերի վճիռը: Շէյխ-իւլ-իսլամի (խալիֆի առաջին կրօնապետը) ընտրութիւնն ու հրաժարեցումը բացարձակապէս կախում ունի սուլթանից: Շէյխ-իւլ-իսլամն էլ նշանակում է, դարձեալ խալիֆի բարայթով, նշանաւոր իւլէմներին, պետութեան գաւառների բոլոր միւֆթիներին (վիճակաւոր վերահսկող կրօնի), ղադիներին (վիճակաւոր դատաւոր), իմամներին (իւրաքանչիւր մզկիթի առաջնորդը), միւդէրիսներին (նոյն մզկիթների քարոզիչ-ուսուցիչ) և ուրիշ սպասաւորներին: Այս պաշտօնական կղերը վարում է իսլամի գործերը շէրիաթի համաձայն, խալիֆի կողմից: Ինչ մեծ-մեծ արտօնութիւններ ունեն իւլէմները, բայց և որքան ստորացրած են իրանց դիրքը:

Պաշտօնանկութեան երկիւղով, չաղ տեղերից չը բաժանվելու և բարձրանալու տենչով մոլորված, ամբողջ բարձրագիր կղերը ստիպվել է համակերպվելու սուլթանի վարչութեան, մինիստրութեան հետ, այնպէս որ դա իր ազդեցութիւնը և վարկը կորցրել է երկրորդական իւլէմների, սօֆթաների և մօլլաների աչքում և ժողովրդից չէ վայելում նախկին յարգը: Թէ ենիչարութեան ժամանակ և թէ նրանից յետոյ, նշանաւոր իւլէմները քանի գլուխները բարձրացրել են, բողոքել են ապօրինութիւնների դէմ, ժողովրդին, իրանց աշակերտներին գրգռել են հիւնքեարների դէմ, վերջիններս լռելեան, առանց ցոյցի, նրանց բռնել, կոտորել և գաղտնի ջուրն են գցել ձկներին կերակուր: Վերջին դարում քանի՜ քանի՜ հազար սօֆթաներ ու մօլլաներ կապկպված նաւեր են լցվել ու ծովերի խորքերը թափվել:

Սուլթան Մահմուդ Բ. ենիչէրիները կոտորելուց, ռուսաց հետ խաղաղութիւն կապելուց յետոյ, երբ ցանկանում էր անկեղծ կերպով մտցնել իր պետութեան մէջ եւրօպական բարեկարգութիւններ, իւլէմները նրա առաջը կտրեցին, չը թողին այլ ևս ոչ մի քայլ առաջ գնալու: Պետութիւնը այդ ժամանակ ծանր պարտքի տակ էր և միջոցներ էլ չը կար ռէֆօրմներն իրագործելու: Սուլթանի մտերիմները խորհուրդ տուին, ֆրանսիացիների նման, վագըֆները ծախել (մզկիթների և իւլէմների յատկացեալ անշարժ կալուածներ), իսկ կղերին պետական գանձարանից թոշակ տալ, որով ոչ միայն պետութեան պարտքը կարող էր վճարել, բարեկարգութիւններ մտցնել, բերդեր, նաւեր շինել տալ, զօրանոցներ ու հասարակական շինութիւններ շինել, այլ այդ ընթացքով կը կարողանար բոլորովին ընկճել իսլամի կղերը: Ծախելով վագըֆները, սուլթանը բոլորովին կը փշրէր իսլամի իւլէմների ոյժը, որոնք իրանց ապրուստի, թոշակի սիրոյ համար, պարտաւորեալ աւելի շուտ պիտի ընկճվէին, ձուլվէին պետութեան և նրա շահերի հետ, որով աւելի արագ կարելի կը լինէր կատարել կարևոր բարեկարգութիւնները:

Բայց կղերը, հասկանալով սուլթանի միտումները, այնպէս ընդդիմութիւն ցոյց տուեց, այնպէս լարեց ժողովուրդը հիւնքեարի դէմ, որ սուլթանի ամենամօտ անձնաւորութիւնները նրան «գեավուր» (ուրացող, անհաւատ) համարելով, խորշում, հեռանում էին նրանից: Բանն այնտեղ հասաւ, որ թշուառ սուլթանը կորցրել էր իր հաւատը իրան շրջապատողների վրա, վշտալի խոյս էր տալիս բոլորից և հանգստութիւն չէր գտնում: Միայն սիրելի քրոջը վստահած, նրա մօտն էր միայն ապահովապէս քնում, հանգստանում Չամլըջայի բարձունքի վրա, բայց այնտեղ էլ իւլէմների ձեռքը նրան դադար չը տուեց: Մի գիշեր բարձերը բերանին դրին, խեղդեցին նրան, մօտ քառասուն տարեկան հասակում, իր կեանքի այն շրջանում, երբ նա անձամբ ամեն բան քննած, ամեն բան ուսումնասիրած, ամեն ծրագիր պատրաստած՝ ձեռնամուխ էր լինում իսկական ռէֆօրմատոր դառնալ իր երկրի:

Երբ Բօլգարիայի սարսափներից յետոյ, 1876 թւին, սուլթան Ազիզը, Աւստրիայի կաբինէտի առաջարկութեամբ, եւրօպական պետութիւնների պահանջներին մի կերպ բաւարարութիւն տալու նպատակով, հրատարակեց մի նոր «խաթթ-ը-հիւմայիւն», որով քրիստոնեայ հպատակներին իսլամի հետ կատարեալ հաւասարութիւն էր խոստացվում, մինչև անգամ քրիստոնեաներն իրաւունք էին ստանում այդ հրովարտակով դատարաններում, ամեն գործում, վկայելու իսլամների հետ հաւասար ձայնով, վերացվում էր զինուորական տուրքը (բէտէլէմ-ասքէրիէ) և դրա փոխարէն նոյն օրվանից ծնված քրիստոնեայ մանուկները պարտաւորվում էին զինուորակոչութեան ենթարկվելու, կատաղեց իսլամ ամբոխը, քրթմնջեցին, մզկիթների մէջ բողոք և իսլամների կողմից կատարեալ ատելութիւն սկսվեց քրիստոնեաների դէմ յայտնապէս:

Այդ ժամանակ առիթից օգտվելով, սուլթանի հակառակորդ կուսակցութիւնը միացաւ իւլէմների հետ և ճնշում գործ դրեց սուլթան Ազիզի վրա: Մի քանի ցոյցերից յետոյ սուլթան Ազիզը զիջաւ իւլէմներին և նրանց ընտրելներին կանչեց, յանձնեց մինիստրութիւնը: Միհդատ փաշան, իւլէմների հետ ձեռք ձեռքի տուած, կղերի ձեռքով, օսմանեան պետութեան բոլոր մզկիթների իմամների միջոցով, իսլամ ազգաբնակութիւնից գաղտնապէս, իր նախօրօք պատրաստած, ստորագրված թերթերով ստորագրութիւններ հաւաքեց, որով ամբողջ իսլամ ժողովուրդը իր գայրոյթն էր յայտնում հիւնքեարի ընթացքի համար, իսլամի շէրիաթը ոտնատակ տալու պատճառով: Այդ հանրագրութիւնների վրա հիմնված՝ շէյխ-իւլ-իսլամ Խայրուլլահ էֆէնդին ֆէթվա տուեց՝ գահ իջեցնել խալիֆների գահից Ազիզ սուլթանին և նրա տեղ բարձրացնել Մուրադին, որից առաջացած արքայասպանութիւնը պարզ է աշխարհին:

Այս իսկ պատճառներով սուլթանները միշտ վախենում են և չեն համարձակվում զուրանի, շէրիաթի հակառակ քայլեր անել, ժողովուրդը չը գրգռելու համար: Բարձրագիր իւլէմներն էլ միջին ճանապարհը բռնած, երբեմն հիւնքեարի կողմն են տատանվում, երբեմն էլ ժողովրդի, որով երկրին տիրում է կատարեալ անիշխանութիւն: Ո՛չ շէրիաթն է թագաւորում, ո՛չ էլ նորակազմ օրէնսդրութիւնները. խալիֆը, իւլէմները, վէզիրները այս կողմն էլ են թեքվում, այն կողմն էլ, յայտնի բան է միշտ իսլամի շահերին նախաայն հաւատը, որ կառավարութիւնը ունի դէպի տեղական գործողները։ Առաջ մեր երկրում ինքնավարութիւններ կային միայն մի քանի մեծ քաղաքներում, օրինակ Թիֆլիսում, Բագվում, Քութայիսում, Բաթումում, այժմ մեր բոլոր գաւառական քաղաքներն են ստանում ինքնավարութիւն։

Եթէ ազգաբնակութիւնը կապացուցանի, որ նա կարող է բարեխիղճ կերպով վարել իրան յանձնած գործերը և զգալի բարեփոխութիւններ առաջացնել, այն ժամանակ կառավարութիւնը աւելի եւս կը խրախուսի մեր հասարակութեանը, տարածելով մեր երկրում այն հաստատութիւնները, ինչպէս, օրինակ, զեմստվօների հիմնարկութիւնները, որոնք գործում են կենտրոնական նահանգներում։

Մեզանից, մեր բարեխիղճ գործունէութիւնից է կախված թէ՛ ամուր պահելու այն ինքնավարական հիմնարկութիւնները, որ մենք ունենք այժմ և թէ՛ հաւատ ներշնչելու, որ մենք ընդունակ ենք լուրջ վերաբերվել հասարակական գործունէութեան և գնահատել մեզ տուած իրաւունքները։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

—

I Ով պէտք է գործադրի

«Kölnische Zeitung» լրագիրն ասում է, թէ դեռ առ այժմ չէ կարելի նախատեսել հայոց հարցի ապագայ զարգացումը Թիւրքիայում։ Որքան էլ սուլթանը բարի դիտաւորութիւններ ունենայ, նա չունի, այնու ամենայնիւ, իր կամքի լաւ և եռանդոտ կատարողներ։ Այն ինչ չէ կարելի հերքել, որ թէ հայ, թէ մակեդօնացի ազգաբնակութիւնները անդադար զրգռված դրութեան մէջ են և նրանց հանգստացնելը, անկասկած, ամենադժուար գործը կը լինի Թիւրքաց ադմինիստրատօրների համար։

II Անօգուտ պաշտպանութիւն

Վատիկանի «Osservatore Romano» լրագիրը պաշտպանում է Լեւոն XIII պապին այն մեղադրանքի դէմ, որ իբր թէ նա ոչինչ չարեց յօգուտ հայերի։ Լրագիրը հաղորդում է, որ պապը ի նպաստ հայոց հարցի ծածուկ անում էր բոլորը, ինչ որ կարող էր։

III Դեսպանական փոփոխութիւն

Պարիզի բրիտանական դեսպան լորդ Դիւֆէրին շուտով թողնելու է իր պաշտօնը։ «Temps»-ի ասելով, լորդ Դիւֆէրինի տեղ Պարիզի բրիտանական դեսպան երեւի կը նշանակվի Կ. Պոլսի այժմեան դեսպան սըր Ֆիլիպ Կէրրի։

IV Իտալիայի դիրքը

«Memorial Diplomatique» լրագրի Հռոմի թղթակիցը հաւատացնում է, որ իտալական մինիստրութեան խորհրդում արդէն վերջնականապէս վճռված է, որ եթէ լուրջ անցքեր տեղի կունենան Արեւելքում, Իտալիան երեքպետեան դաշնակցութիւնից կատարելապէս անկախ կը գործի, և անհրաժեշտ դէպքում, մինչև անգամ նրա դէմ կերթայ։ Իտալիան կը միանայ Անգլիայի հետ մինչև անգամ այն դէպքում, եթէ Անգլիայի և Գերմանիայի մէջ թշնամական յարաբերութիւններ կը լինեն։

V Եօթ անուններ

Կ. Պոլսից «Новости» լրագրին հեռագրում են, որ մեծ վեզիրը հաղորդեց դեսպաններին Հայաստանի բարենորոգումների վրա հսկող յանձնաժողովի եօթ անդամների անունները, որոնց հաստատել է իրանց պաշտօնների մէջ Թիւրքաց կառավարութիւնը։

VI Պահանջներ

Կ. Պոլսից Ռուսաց գործակալութեանը հեռագրում են նոյեմբերի 11-ից. «Երեք պետութիւնների դեսպանները երէկ խորհուրդ կազմեցին՝ ռէֆօրմներին վերաբերեալ Բ. Դրան ուղարկած մէմօրանդումը քննելու համար։ Դեսպանները վճռեցին դիմել Բ. Դրանը մի յայտագրով, որի մէջ ասված կը լինի, թէ հմուտ անձանց նահանգապետներ նշանակելու հրամանը տեղեկութեան է առնված, սակայն դեսպանները վերապահում են իրաւունք՝ պահանջել այն նահանգապետների պաշտօնանկութիւնը, որոնք անընդունակ կը գտնվեն։

VII Վաղ չէ միթէ

Լօնդօնից «Нов. Время» լրագրին հեռագրում են, որ Լօնդօնի լորդ-մէրի բանկէտում մարկիզ Սօլսբիւրի մի մեծ ճառ կարտասանի, որի մէջ կը յայտարարի այն փառաւոր հետեանքների մասին, որոնց հասաւ անգլիական դիպլօմատիան՝ ճնշում գործ դնելով Թիւրքիայի և Չինաստանի վրա։

VIII Նոր յուզմունքներ

Կարաուրգանից, նոյեմբերի 18-ից, «Нов. Обозрѣніе» լրագրին հեռագրում են. «Բիթլիսում յարձակումն գործեցին հայերի վրա։ Դէրջանը (Մարաչի շրջան) ամբողջապէս աւերակների կոյտի է փոխարկված։ Յուզմունք սկսվեց և Էրզրումի շրջականներում։ Քաղաքում ամեն րօպէ խառնակութիւնների են սպասում։ Բասէնի հինգ գիւղեր պաշարման դրութեան մէջ են։ Հաղորդակցութիւնը հայերի համար ընդհատված է։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Վաղը, նոյեմբերի 22-ին, Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը՝ իր վանքի համեստ պատերի մէջ պէտք է տօնի Այտընեանի 50-ամեայ բեղմնաւոր և համակրելի գործունէութեան յոբելեանը։

Այդ համակրելի տօնախմբութեանը արժանաւոր կերպով մասնակցելու համար Թիֆլիսի գրական մի շրջանում կազմվեց մի մասնաժողով.—սակայն Թիւրքիայից եկած վերջին տխուր լուրերը, Կ. Պոլսի և Տրապիզօնի կոտորածների ծանր լուրերը՝ ստիպեցին թողնել հրապարակական շնորհաւորութիւնների միտքը։—Մտադրութիւն կար տպել յոբելեարի կենսագրութիւնը առանձին գրքով, պատրաստել ուղերձներ, ընծաներ.—բայց այդ բոլորը թողնվեց, որովհետև հասարակութեան միտքը այժմ լարված է բոլորովին այլ զգացմունքով։

Մնում է միայն բաւականանալ համեստ՝ հեռագրական շնորհաւորութիւններով և մենք համոզված ենք, որ թէ մեր գրական շրջանները, թէ խմբագրութիւնները, թէ հասարակական զանազան դասակարգերի ներկայացուցիչները կը շտապեն հեռագրերով իրանց յարգանքը յայտնել պատկառելի ծերունուն, որի 50 տարվայ կեանքը տակաւին, լուրջ և համակրելի գործերի մի երկար շղթայ է կազմում։

Ինչպէս մեզ հաղորդում են, այսօր Այտընեանին շնորհաւորական հեռագրեր պէտք է ուղարկեն Բարեգործական Ընկերութիւնը, Ներսիսեան դպրոցը, Հայուհեաց ընկերութիւնը, Հրատարակչական ընկերութիւնը, կանայք, օրիորդներ, քահանաներ և գրական զանազան շրջանները։

«Մշակի» խմբագրութիւնը շնորհաւորական հեռագիր ուղարկեց ծերունի յոբելեարին։

ՎՐԱՑ ԳՐՈՂ ՌԱՓԱՅԷԼ ԷՐԻՍՏՕՎԻ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Վաղը, նոյեմբերի 22-ին, վրաց հասարակութիւնը պէտք է տօնէ վրաց բանաստեղծ իշխան Ռափայէլ Էրիստօվի գրական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը։

Նոյեմբերի 22-ին լրանում է 50 տարի այն օրից, երբ Էրիստօվ գրեց իր առաջին բանաստեղծութիւնը։ Իշխան Էրիստօվ համարվում է վրաց գրականութեան մէջ առաջնակարգ բանաստեղծ։ Նա, նախամեծարապէս ժողովրդական բանաստեղծ է և առաջինն է եղել, որ սկսել է իր բանաստեղծութեան համար նիւթ վերցնել ժողովրդական կեանքից։ Բացի դրանից, նա յայտնի է իբրև դրամատիկան գրող և իբրև վիպագրող, և նրա դրամաներից մի քանիսը մինչև այսօր էլ մեծ աջողութեամբ են ներկայացնվում վրաց բեմի վրա։ Բայց նրա «գլուխ գործոցը» վրաց գրականութեան մէջ համարվում է նրա մի ընդարձակ պօէման՝ «Թամարիանի» անունով, որը և իսկապէս հռչակել է նրա անունը, իբրև առաջնակարգ բանաստեղծի։

Իշխան Էրիստօվ այժմ մօտ 80 տարեկան մի ծերունի է և ոչ միայն իբրև բանաստեղծ, այլ և իբրև մարդ շատ յարգված և սիրված է վրաց ժողովրդից։

Յոբելեանի տօնախմբութիւնը կատարվելու է հետևեալ կերպով։ Վաղը, կիրակի, նոյեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 11 ին, վրաց երկու բանաստեղծներ՝ Ակակի Ծերէթէլի և Իլիա Ճավճավաձէ գնալու են յոբելեարի բնակարանը և բերելու են նրան Քաշվէթի եկեղեցին, որտեղ գոհացողական մաղթանք պէտք է կատարվի։ Մաղթանքից յետոյ վրաց ազնուականների կալուածական բանկի թատրօնում ժամը 12-ին յոբելեարին ողջունելու է վրաց երգեցիկ խումբը, որից յետոյ պէտք է ներկայանան զանազան պատգամաւորութիւններ, կարդացվեն ուղերձներ, ճառեր, ոտանաւորներ և ցանկացողները մատուցանեն յոբելեարին իրանց շնորհաւորութիւնները։ Երեկոյեան նոյն թատրօնում ներկայացնվելու է իշխան Էրիստօվի դրամաներից մինը, որից յետոյ պէտք է տեղի ունենայ ընթրիք ի պատիւ յոբելեարի։

«Մշակի» խմբագրութիւնը իր ուրախութիւնն է յայտնում, որ ժողովրդի օգտի համար և ժողովրդական ոգւով գործող բանաստեղծի յիսնամեայ տոկուն գործունէութիւնը այսօր պսակվում է ժողովրդի հրապարակական յարգանքներով, և իր անկեղծ շնորհաւորութիւնը միացնում է վրաց հասարակութեան շնորհաւորութիւնների հետ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

—

Մինչև 80-ական թւականները, ասում է «Новое Время» լրագիրը, ժողովրդական գրադարանների հարցով շատ քիչ էր հետաքրքրվում հասարակութիւնը։ Գրադարաններ հիմնելու հոգսը համարեա բացառապէս մասնաւոր բարեգործների վրա էր ընկած, որոնք չափազանց սահմանա-

---

պատիւ տեղ տալով։ Այդ երկգիմի ընթացքը նկատելով իսլամ հաւատացեալները, լիովին շերիաթին հակառակ, չեն կարող հիւնքեարին խալիֆ համարել և դէպի նա զզուանք չը զգալ։

VII. Իսլամ ժողովուրդը, պետական պարտաւորութիւնները կատարելուց առաջ, իր հասարակական իրաւունքների տէրն է ուզում դառնալ։ Ամեն մի իսլամ, նորադարձ, թէ դարերով իսլամի սերունդ, իւլէմա, թէ գեհիկ, երկրագործ, թէ արհեստաւոր, ծառայող, թէ պաշտօնեայ, անխտիր իրան ժառանգորդ է համարում իսլամի պետութեան մէջ։ Պէտք է իմանալ, որ դասակարգութիւն, իշխանականութիւն, զարմականութիւն, ազնուատոհմութիւն չէ ընդունում ղուրանը. իսլամը իր հետեւողների մէջ խտրութիւն չէ դնում. միայն ոչ իսլամներն են, որ չեն կարող ջէհէննէմի որդոց հետ հաւասար վայելել երկրի բարիքները։ Պետութեան ամբողջ կարողութիւնը իսլամի սեփականութիւնն է, «բէյթիւլմալն» է. ոչ-իսլամը «րայա» (հպատակ) է երկրի մէջ, որը չէրիաթի համաձայն, պետական վարչական որ և է գործում ոչ ձայն ունի, ոչ կարող է միջամտել և ոչ էլ իր վիճակի դէմ բողոքել։ Կառավարութեան մասնակցելու իրաւունք չունի «րայան». սրան կառավարելու են իսլամի որդիքը։ Քրիստոնեայի կայքը, կարողութիւնը իւրացնելը, ուտելը, խլելը յանցանք չէ, որովհետև այդ ամենը իսլամի սեփական կալուածների արդիւնքից յափշտակած է «րայայի» մօտ մնացած. «րայայի» ղուլուկները յափշտակելը բարեգործութիւն է, նրանց իսլամացնելու համար՝ յաւիտենականութեան մէջ աւելի շատ հուրիներ են խոստացված իսլամի ժառանգորդներին։

Ամեն մի լաւ բան վայել է իսլամի զաւակներին. լաւ ձին, լաւ զէնքը, լաւ այգին, լաւ արօտատեղը, լաւ անտառը, լաւ հագուստը արժանի է ղուրանի որդիներին, որոնք առանց այլ և այլի կարող են յափշտակել «րայաներից», որովհետև նրանք «րայաների» կեանքը խնայում են, պաշտպանում են օտարների յարձակումներից և նրանց տեղաւորել են իրանց հովանու ներքև։ «Րայա» բառը հպատակ (sujet) բառի իմաստով չէ ընդունում իսլամը։ «Րայան» նրա աչքում մի տեսակ ֆէլլահ է (ինչպէս քիւրդերն անուանում են քրիստոնեաներին), որը պիտի դաշտ, աշխատի իր տիրոջ համար և յանձնէ այդ աշխատութեան պտուղը ամբողջապէս իսլամի զաւակներին, առանց մտածելու անգամ իր ցամաք օրապահիկի համար։ Ամեն մի իսլամ ձգտում է հրամայող դառնալ, պահանջող լինել ոչ-իսլամի գլխին, և րայաներին իր երկնապարգև ստրուկները նկատել։ Այս ամենը իւրաքանչիւր իսլամի հոգու մէջ մտած, մարմնացած մոլորութիւն է մանուկ հասակից։ Ընտանիքի շրջանը, դրացիութիւնը, կղերը, կառավարութիւնը և դատարակութիւնը այդ ոգին են ներշնչել նրա մէջ և այդ ամենը նրա աչքում սովորական բան է թւում։

Իսլամ անհատը զարմանում է, երբ լսում է, որ իր բէտուլի (առաքեալ) տեղապահը, խալիֆների յաջորդը այդ րայային ուզում է րայայութիւնից բարձրացնել, կամ աւելի լաւ է ասել, իրան նմանացնել և րայայի հետ դասաւորել. զայրանում է, երբ նրան արդէն թոյլ չեն տալիս րայայի աշխատանքից լիուլի օգտվելու. կատաղում է, երբ րայան ընդդիմանում է նրան՝ յափշտակութիւնների դէպքում. բորբոքվում է, երբ նրան դատի են հրաւիրում րայային հասցրած չարիքի համար. արհամարհում է այն ատեանները, որտեղ դատաւորների և կառավարիչների չարքում տեսնում է բազմած րայային. մերժում է այն վճիռները, որ չէ կայացրել իր կրօնապետը (ղազին-միւֆթին). չէ հպատակվում այն հիմնարկութիւններին, որտեղ չէրիաթի փոխարէն մի ինչ որ կանոնադրութիւն է գործածվում և չէ ճանաչում այն խալիֆին, որը բէտուլի հրամանների հակառակ, չէրիաթի աւանդութիւնների դէմ է գործում։

—

Վերջացնելով մեր խօսքը, եզրակացնում ենք։—Օսմանեանների բաղդը դէպի անկումը թեքվելուց յետոյ, երբ պարբերաբար նրանց բանակները իրար ետևից սկսեցին գլխակոր վերադառնալ պատերազմական դաշտերից, երբ սրանց յաղթողները գրաւեցին իսլամական ընդարձակ նահանգները և ի լրումն այդ ամենի, երբ հիւնքեարները խոնարհվեցին, պարտաւորվեցին քրիստոնեայ պետութիւնների հետ կապած դաշնագրերի զօրութեամբ վերանորոգութիւններ մացնել իրանց երկրում, թոյլ տուին քրիստոնեայ պետութիւններին միջամտելու իսլամի երկիրների ներքին գործերում, մի խօսքով ուղեցին չափ ու սահման դնել իսլամի անսանձ հարստահարութիւններին,—իսլամ ժողովուրդը, կղերը չը կարողացան զիջանել, նկատելով իրանց սուլթանների անկումը, թուլութիւնը, որին և հետևեց խալիֆի երկրում աստիճանաբար չէրիաթի գործադրութեան դադարումը, իսլամականների սիրտն էլ քիչ քիչ սառեց դէպի օսմանեանների հիւնքեարը, թէ պետութեան սահմանների մէջ և թէ դուրսը իսլամականները սկսեցին խորթ աչքով նայել սուլթանին։

Արդէն սրանից 50—60 տարի առաջ նշանաւոր իւլէմաներ գաղտագողի տարածում էին այն միտքը, թէ խալիֆայութիւնը դուրս է գալու հիւնքեարների ձեռքից, թէ հիւնքեարների համար «խուդբէն» կարդալը մեղք է, յանցանք է, բայց ոչ ոք սիրտ չէր անում հրապարակ դուրս գալ, ամենքն էլ սպասում էին Մահդիի երեւալուն, որը պիտի զօրացնէր իրանց անընկճելի պետութիւնը, բարձրացնէր սանջակըշէրիֆը (նուիրական դրօշակ) և սասանեցնէր գեաւուրներին, տիրելով ամբողջ աշխարհին։ Իսլամները սպասում են «ամենազօրաւորին». բէտուլի կտակի համաձայն նա պիտի գայ, հանէ և նրանց ազատէ մեղկացած իւլէմաներից և անօրինացած խալիֆից ու վերանորոգէ իսլամի օրինական խալիֆութիւնը և վերահաստատէ չէրիաթը։

Երբ Եգիպտոսում, 1830-ական թւականներից յետոյ, Մէհմէդ-Ալի փաշան, օսմանեանների նախկին կուսակալը, ապստամբվեց, զօրացաւ և տիրեց բացի Եգիպտոսի հարևան նահանգներից, Ասորիքին եւս, այն երկրին, որտեղից կորէյշեանները, իմամները հրամայել էին աշխարհին իսլամականութեան սկզբնական դարում, երբ Մէհմէդ-Ալին Շամը տիրելուց յետոյ (Դամասկոս) մօտենում էր Փոքր-Ասիային, իսլամները սրտատրոփ սպասում էին, որ կը գնայ և կը խլէ հիւնքեարներից խալիֆութիւնը։ Բայց Եւրոպան դադարեցրեց նրա քայլերը արագ, արձակ և ազատ Կ. Պոլիս դիմելուց։ Վերջապէս սրանից 12 տարի առաջ, երբ Մահդին Սուդանում երևաց և Սահարայից հաւաքեց գնդեր, այլ ևս իսլամ աշխարհը կասկած չունէր, որ նա պիտի վերանորոգէր խալիֆութիւնը և տիրէր աշխարհին։ Բայց այդ անգամն էլ իսլամի յոյսը փշրեցին անգլիացիները, Մահդիի ճանապարհն էլ կտրեցին։

Այժմ իսլամ աշխարհը, հիւնքեարներից յոյսը կտրած, ձեռքերը ծալած սպասում է մի Նոր Մահդիի, որը կարծում ենք և հաւատացած ենք, որ հրէաների սպասած Մեսիայից վաղ աշխարհ չի գայ...

Ա. ա.

փակ հայեացք ունէին այդ գործի մասին և բաւականանում էին միայն մի քանի նիհար տետրակներ բաժանելով: Այդ էր մասամբ պատճառը, որ ժողովրդական գրադարանների գործը շատ դանդաղ էր զարգանում և 1894 թւի սկզբին Ռուսաստանը միայն 40 ձրի ժողովրդական գրադարաններ ունէր:

Այժմ ժողովրդական գրադարաններ կազմելու գործը արագ քայլերով առաջ է գնում: Նախաձեռնութիւնը պատկանում է Պետերբուրգի «Գրագիտական մասնաժողովին», որը անցեալ տարի ձեռնարկեց նուիրատւութիւններ հաւաքելու՝ 100-ից ոչ պակաս ձրի ժողովրդական ընթերցարաններ և գրադարաններ կազմելու համար: Պետերբուրգի «Գրագիտական մասնաժողովի» ձեռնարկութիւնը աջողութեամբ պսակվեց և նրա սպասած 25,000 րուբլու փոխարէն հաւաքվեց 30,000 րուբլի, և անկասկած աւելի էլ կը հաւաքվի: Մի այդպիսի անսպասելի աջողութեանը գլխաւորապէս նպաստեց և այն հանգամանքը, որ մասնաժողովը, դիմելով զէմստվօներին, զանազան հիմնարկութիւններին և անձանց՝ դրամական նուիրատւութիւններով օգնել այդ հանրօգուտ գործին, մի և նոյն ժամանակ առաջարկեց զէմստվօներին 100 նոր բացվող ժողովրդական գրադարաններին ձրի գրքեր մատակարարել, եթէ որ զէմստվօներն իրանց կողմից կը տան այդ գրադարաններին տուն և միջոցներ նրանց ապագայ գոյութեան համար: Մօտ 200 զէմստվօներ արձագանք տուին մասնաժողովի այդ համակրելի առաջարկութեանը:

«Գրագիտութեան մասնաժողովի» դերը միայն դրանով չէ սահմանափակվում: Նա իր եռանդուն և հմուտ անդամներից կազմված մի յանձնաժողովի ձեռքով հաւաքեց և հրատարակեց ձրի ժողովրդական գրադարաններին վերաբերեալ օրէնքները, կազմեց նրանց օրինակելի կանոնադրութիւնները և, վերջապէս, կազմեց ուսումնական մասնաժողովի կողմից հաւանութիւն գտած գրքերի օրինակելի ցուցակը ձրի գրադարանների և ընթերցարանների համար՝ զանազան գնի:

Այդ հրատարակութիւնները ձրի ուղարկվեցին զէմստվօներին, որոնք մինչև այժմ ծանօթ չէին ձրի գրադարաններին վերաբերեալ օրէնսդրութեան հետ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, նոյեմբերի 15-ին

Խնդրում եմ «Մշակի» մօտակայ համարներից մէկում տեղ տաք հետևեալ բացատրութեանս:

«Մշակի» 117-րդ համարում, թղթակից Արցախեցին հաղորդելով, որ թեմական դպրոցում ամսիս 1-ին, Վեհափառ Կաթողիկոսի օծման տարեդարձի առիթով, հանդէս է կատարվել, Աստուած գիտէ, թէ ինչ նպատակով, անհրաժեշտ է համարում աւելացնել. «ժողովուրդ գրեթէ բոլորովին չը կար»:

Պարտք եմ համարում այդ առիթով բացատրել, որ նոյեմբերի 1-ի հանդէսը դպրոցիս վարչութիւնը պատրաստել էր յատկապէս աշակերտների համար և ոչ թէ ժողովրդի, որին մենք չէինք էլ կարող պատշաճաւոր ընդունելութիւն ցոյց տալ, որովհետև դպրանոցի հանդիսարանում նոյն իսկ մեր աշակերտները չեն կարողանում տեղաւորվել, ուր մնաց որ հիւրեր ընդունէինք: Բայց չը նայած, որ նոյեմբերի 1-ին ոչ գրաւոր, ոչ էլ բերանացի չէինք ժողովուրդ հրաւիրել աշակերտական հանդիսին ներկայ գտնվելու, հակառակ մեր սպասածին, այդ հանդիսին ներկայ գտնվեցան, բացի դպրոցի բազմաթիւ աշակերտներից և ուսուցիչներից, նաև մօտ 50 հանդիսականներ:

Տեսուչ թեմական դպրոցի՝ Ե. Մադաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, նոյեմբերի 17-ին

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով խորին շնորհակալութիւն յայտնելու իշխանուհի Մելանիա Իվանովնա Ջելօկաեվային և իշխանուհի Վարվարա Անդրէևնա Ավալօվային, որոնք նուիրեցին 150 րուբլի, յօգուտ Կիևի համալսարանի հայ և վրացի աղքատ ուսանողների:

Ուսանողներ՝ Ա. Բաղդասարեան
Մ. Աբաղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, Թագաւոր կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի գահակալութեան օրը, գոհացողական մաղթանք կը կատարվի Սիօնի մայր եկեղեցում:

—

Երէկ, նոյեմբերի 20-ին, հանգուցեալ Թագաւոր կայսր Ալէքսանդր Ալէքսանդրովիչի մահվան տարելիցին, Սիօնի տաճարում պատարագ մատուցվեց, որից յետոյ կատարվեց հոգեհանգիստ: Հոգեհանգստին ներկայ էին զինւորական և քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչները և բազմաթիւ ժողովուրդ:

—

Երէկ, նոյեմբերի 20-ին, Թագաւոր կայսր Ալէքսանդր III-ի մահվան տարեդարձի օրը, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում, երեկոյեան 8 ժամին կատարվեց հոգեհանգիստ, որին ներկայ էին դումայի բոլոր ձայնաւորները և քաղաքային վարչութեան բոլոր ծառայողները:

—

Հինգշաբթի, նոյեմբերի 19-ին, Թիֆլիսի հայ դերասանական խումբը առաջին անգամ ներկայացրեց մի նոր պիէսա, «Բարեգործութեան դիմակի տակ» վերնագրով, հեղինակութիւն Էմին Տէր-Գրիգորեանի: Այդ հինգ գործողութեամբ դրամայի մէջ դուրս են բերված վաշխառու կեղեքիչի, բիւրօկրատ չինօվնիկի, ժամանակակից կրթութիւն ստացած իդէալական հայ օրիորդի, գիւղացի կեղեքիչի, և խաբեբայ ու կեղտոտ փաստաբանի տիպերը: Դերակատարներից միայն Աբէլեան, Ստեփանեան և Աւետեան աջողութեամբ կատարեցին իրանց դերերը: Թատրոնը կիսով չափ լի էր: Թատրոնում ներկայ էր և պիէսայի հեղինակը, որին հասարակութիւնը վարձատրեց ծափահարութիւններով:

—

Կիևի համալսարանի պրոֆէսոր Ա. Գրէնը, որը անցեալ տարի Թիֆլիսում դասախօսութիւններ կարդաց 5-րդ դարի հայոց պատմական շրջանի մասին, հրատարակել է այս օրերս մի նոր աշխատութիւն, «Կովկասի պատմութեան համառօտ ակնարկ» («Краткій очеркъ исторіи Кавказской перешейки») վերնագրով: Այդ հեղինակութեան մէջ նա աշխատում է բացատրել մեր երկրի պատմութեան հեթանոսական շրջանի մութ կէտերը և կողմերը, հայոց, վրաց, պարսից, արաբական, յունական և եւրոպական աղբիւրների, բևեռագրերի և այլ արձանագրութիւնների ու յիշատակարանների հիման վրա: Գրէնի այդ աշխատութեան մասին մենք առիթ կունենանք աւելի մանրամասն խօսելու:

—

Մենք արդէն հաղորդել էինք, որ Նոր-Բայազէթի գաւառում Երևանի նահանգի բնակիչներից մի քանիսը այս տարվայ յունվարի 4-ի գիշերը յարձակում գործեցին կովկասեան հաղորդակցութեան ճանապարհների շրջանի զօրանոցի վրա և սպանեցին այդ զօրանոցի վերակացու Տարանովսկուն և ուրիշներին: Կովկասեան զինւորական նահանգական դատարանը յանցաւորներից հինգ հոգուն դատապարտեց մահվան պատժի, իսկ երկուսին՝ աքսորի: Կովկասի կառավարչապետը, իրան Բարձրագոյն արված իշխանութեամբ, հաստատեց զինւորական դատարանի վճիռը միայն երկուսի՝ այն է Ալիբէգ Հայրապետովի և Խաչատուր Սարգիսովի վերաբերմամբ, որոնք պէտք է մահվան պատժի ենթարկվեն, իսկ մնացածների համար մահվան պատիժը փոխարինեց տաժանակիր աշխատանքներով:

—

Բագուի նաւթարդիւնաբերողներին, լրագիրների խօսքով, ապագայում մի նոր վտանգ է սպառնում, այն է Աւստրիայի մրցման հնարաւորութիւնը: Վերջին ութ տարիների ընթացքում այդ երկրում նաւթի արդիւնաբերութիւնը կրկնապատկվեց, իսկ նորերս Գալիցիայում, Ռուսաստանի սահմանի մօտ, այն է Վօլօչիսկի մօտ, նաւթային շատ հարուստ աղբիւրներ են բացված: Հաշւել են, որ այդ աղբիւրները ոչ միայն բաւարարութիւն կը տան Աւստրիայի կարիքներին, բայց և շատ նաւթ կը մնայ՝ արտահանութեան համար: Այդպիսով վտանգ կայ, որ Ռուսաստանը ոչ միայն կը կորցնի աւստրիական շուկան, այլ և Աւստրիան կարող է մրցել Ռուսաստանի հետ:

—

Ռուս և ֆրանսիացի դրամատէրերի մի ընկերութիւն, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, միջնորդում է Պարսից կառավարութեան առաջ՝ թոյլ տալ երկաթուղի կառուցանել Անդրկովկասեան երկաթուղու Ալիաթ կայարանից Լենքորանի, Թաւրիզի և Թէհրանի վրայով դէպի Պարսից ծոցի նաւահանգիստներից մէկը՝ Բէլուջիստանի մօտ:

—

Թէհրանից հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը, Թէհրանի իր դեսպանի միջոցով, դիմեց պարսից կառավարութեանը, խնդրելով խիստ միջոցներ ձեռք առնել արգելելու տրանզիտով զէնք անցկացնելը Պարսկաստանի վրայով դէպի ասիական Թիւրքիա: Բացի դրանից, Թիւրքաց կառավարութիւնը յայտնեց սահմանապահ զինւորներին, որ եթէ յայտնվի, որ սահմանապահ զինւորներին կաշառելով՝ զէնքեր են մտնում ասիական Թիւրքիա, յանցաւորները, բացի ծառայութիւնից արձակվելուց, զինւորական դատարանին և մինչև անգամ մահվան պատժին կենթարկվեն: Թիւրքիան սկսել է շատ խստութեամբ հսկել իր սահմանների վրա:

—

Երկաթուղիների ներկայացուցիչների ընդհանուր ժողովում որոշվել է գրքերի ճանապարհածախսը պակասեցնել երկու անգամ, այսինքն վերցնել կէսը այն սակագնի, որ մինչև այժմ հաւաքվում էր:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են, նոյեմբերի 17-ից. «Այսօր «Roma» շոգենաւով Բաթում հասան բազմաթիւ տրապիզօնցի ընտանիքներ, որոնք ապաստանվելու տեղ են ընտրել Բաթումը: Հայերի հետ տեղափոխվել են և մի քանի յոյն ընտանիքներ: Հայ գաղթականները թւով մօտ 50 ընտանիք են, մեծ մասը մանուկներ, մատղահաս աղջիկներ և կանայք են»:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 12-ին անձնասպանութիւն գործեց այստեղի ռէալական դպրոցի թւաբանութեան ուսուցիչ լեհացի Կսավերի Կարլօվիչ Վայեվօդսկի, 32 տարեկան հասակում: Ինքնասպանութեան պատճառը վերագրում են ջղային հիւանդութեան: Հանգուցեալը քսանհինգ տարեկան հասակում աւարտելով Մոսկվայի համալսարանը, անցնում է Կովկաս և նշանակվում ուսուցիչ մեր քաղաքում, ուր և մնաց մինչև կեանքի վերջին րոպէները: Յանձին հանգուցեալի մեր ռէալական դպրոցը զրկվեց մի եռանդուն, հմուտ և փայլուն ուժից, որը ամբողջ եօթ տարի իրան ամբողջապէս նուիրել էր դպրոցական գործին: Հանգուցեալի մարմինը երէկ իր բնակարանից տեղափոխեցին հայոց Ագուլեցոց մայր եկեղեցին և այսօր, պատարագից յետ, մեծ բազմութեամբ դագաղը տարան գերեզմանատուն, որտեղից պէտք է փոխադրեն Թիֆլիս՝ հողին յանձնելու: Դագաղի վրա դրված էին հինգ պսակ՝ աշակերտների և ընկերների կողմից:»

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Շուտով լինելու է նոր տանուտէրի ընտրութիւն: Դրա մասին թէև մի շաբաթ է, որ յայտարարված է, բայց դրանով ոչ ոք չը կայ հետաքրքրվող, կարծես դա երկրորդական հարցերից լինի: Դա բացատրվում է այն անտարբերութիւնով, որ վերջին տարիներս տիրում է մեր բոլոր հասարակական գործերում: Մերոնք կը սկսեն խօսել և ափսոսալ միայն ընտրութիւններից յետոյ, երբ ամեն բան վերջացած կը լինի և անհնարին կը լինի ուղղել սխալը: Միակ անձնաւորութիւնը, որը յարմար է այդ պաշտօնին, և որի մասին մասնաւոր շրջաններում խօսում են, դա է Յովհաննէս Կոստանդինեանցը, որ առաջ էլ 17 տարի վարել է նոյն պաշտօնը և որից գոհ են եղել:»

—

ՇՈՒՇՈՒՑ հաղորդում են, որ քաղաքագլխի պաշտօնի համար, իբրև կանդիդատ, առաջարկվում է և Յ. Սարուխանբէգեան, որն այժմ նահանգական դատարանի անդամի պաշտօն է վարում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիեննա, նոյեմբերի 10/22-ին

Մինչև այսօր ինձ անկարելի եղաւ աւելի ընդարձակ տեղեկութիւններ քաղել ընդունված բարենորոգումների մասին: Իրադէն, ինչպէս արդէն հեռագրեցի ձեզ, չէ հրատարակված և միայն մի պաշտօնական յայտարարութեան մէջ յիշված է բարենորոգումների ամենամեծ և ամենակարևոր մասը: Մինչև այժմ ինձ ծանօթ բարենորոգումների ամբողջութիւնը հետևեալն է:

1) Քրիստոնեաները պէտք ընդունվեն ոստիկանութեան մէջ իրանց թւի համեմատութեամբ:

2) Զրի աշխատութիւնը, որին ենթարկված են հայ գիւղացիները, պէտք վերջանայ:

3) Քիւրդերը զինաթափ պէտք լինեն և համիդիէ ձիաւոր գնդերը միայն զինւորական ծառայութեան ժամանակ զէնք և համազգեստ պէտք կրեն: Ջանքեր պէտք լինեն քիւրդերի թափառական կեանքին վերջ տալու, նրանց հողեր յատկացնելով:

4) Կուսակալների և կառավարիչների օգնականները քրիստոնեայ պէտք լինեն:

5) Հարկերը պէտք ժողվէ գիւղի գլխաւորը, հետևաբար հարկ հաւաքելու մինչև այժմ ի գործ դրված սիստեմը, այն է ծախել ամբողջ գիւղերի հարկահանութիւնը մասնաւոր անձերի, պէտք վերջանայ: Գիւղացու կարասիքը, գործիքը և սերմնացուն պէտք չը գրաւվեն կառավարութեան ունեցած պարտքի փոխարէն:

6) Հայ աքսորեալները և գաղթականները ազատ պէտք վերադառնան իրանց հայրենիքը, Թիւրքահայաստան և պէտք տիրանան իրանց սեփական հողին:

X.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, նոյեմբերի 10-ին

Հաւաստի աղբիւրներէ տեղեկացուած է, որ յունաց նախկին հրաժարեալ պատրիարքներէն մին՝ Յովակիմ Գ. որ Ներսէսի ժամանակակից եղաւ, տեսակ մը յանդիմանական գիր գրած է Անթիմոս պատրիարքին:

Նամակին շարժառիթ եղած է Անթիմոսի մէկ քարոզը, որով յորդորած է իր ժողովուրդը ցուրտ աչքով դիտել հայ ժողովուրդը, որ, մահը աչքին առած, գոյութեան կռիւներու մէջ կը նետուի անհաւասար ուժերով: Տիեզերական պատրիարքը կը պախարակէ այդ ընթացքը, և յոյն ժողովուրդին աչքը կը դարձնէ սուլթանին ոսկի գահոյքը, ուր շնորհքներ կը պահուին, ուր պատուանշաններ կը սպասեն՝ եպիսկոպոսական խաչակիր կուրծքերը փառազարդելու: Եւ այս քարոզը, իբրև տիեզերական պատրիարքի քարոզ, բաւական զգալի սառնութիւն մը կը բերէ յոյն հասարակութեան մէջ, և ջերմութեամբ ողջունած հայկական շարժումները կը սկսին պաղ աչքով դիտել յոյները:

Յովակիմ պատրիարք լսելով այս ցաւալի պարագան, կը գրէ Անթիմոսին, թէ ինք, երբեմն տիեզերական աթոռին վրա, ջանացած է երկու քոյր եկեղեցիներուն համար ու հայ և յոյն ժողովուրդներուն մէջ մերձեցումներ յառաջ բերել: Հիմի՝ երբ կը լսէ, որ Տէր-Անթիմոս սառուցիչ քարոզներ կուտայ և միամիտ ժողովուրդը տեսակ մը անտարբերութեամբ կը զինէ չարչրուած ժողովրդի մը դէմ, ինք շատ կը ցաւի, ու սրտանց կը կսկծայ: Ուստի կը յորդորէ որ Քրիստոսի սիրով, յանուն մարդկութեան ու խաղաղութեան, ոչ միայն սառնութիւն բղխեցնէ բեմէն, ձեռքէն եկած սփոփանքը չի զլանայ հայոց:

Տէր-Անթիմոս, կըսուի, այդ կշտամբողական նամակը առած թէ չէ, կառավարութեան կը հասնէ: Բարեբաղդաբար, յոյն հասարակութիւնն էլ լուր կառնէ. զգացումներու ահագին յեղաշրջութիւն մըն է, որ կը սկսի, և վերէն վար բուռն զայրոյթ Անթիմոսի դէմ: Անհաւանական չէ ատ, երբ գիտնանք, որ ինչ որ Ներսէս եղած էր մեզի համար և ինչ համակրանք կը վայելէր իր հօտին մէջ, նոյն եղած է Յովակիմ Գ. և յոյն ժողովուրդը անձկատ նայուածքով կը դառնայ միշտ այդ անուան ետևէն:

Անթիմոսի անկումը կը գուշակուի:

Պ—ի

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի: Նոյեմբերի 17-ին, Թագաւոր կայսրի, Թագուհի կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի և Օգոստափառ Ընտանիքի՝ սպառնացող վտանգից հրաշալի փրկութեան տարեդարձին, Ցարսկոե-Սելօում, Աղեքսանդրօվեան պալատում գոհացողական մաղթանք կատարվեց: Ներկայ էին Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէօդօրօվնա և Աղեքսանդրա Ֆէօդօրօվնա կայսրուհիները և ուրիշ Բարձրագոյն Անձինք:

Հոկտեմբերի 17-ին մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում, կառավարչական, հասարակական և բարեգործական հիմնարկութիւններում, բոլոր զօրամասերում, դպրոցներում և ուրիշ տեղերում գոհացողական մաղթանքներ կատարվեցին:

«Правит. Вѣстн.» լրագրի խօսքով, ներքին գործերի մինիստրութիւնը հաստատեց թատրօնական զառամեալ գործիչների համար ապաստարանի կանօնադրութիւնը: «Свѣтъ» լրագրի խօսքով, այդ ապաստարանի հանդիսաւոր բացումը տեղի կունենայ հոկտեմբերի 20-ին:

Այսօր լրագիրները մեծ գովասանքով են խօսում Տօլստօի «Власть тьмы» (Խաւարի իշխանութիւն) պիէսայի մասին, որ խաղացել է գրականական-արտիստական խումբը փոքր թատրօնում: Պիէսան մեծ տպաւորութիւն գործեց իր տիպերի գեղարուեստական ճշդութեամբ:

ՎԻԼՆՕ, 18 հոկտեմբերի: Բացվեցին «Կարմիր-խաչի» ողորմած քոյրերի կուրսերը:

ՄԻՒՆԽԷՆ, 18 հոկտեմբերի: Պատգամաւորների ժողովում մի քանի հռետորներ դատապարտում էին գերմանական կառավարութեան գործունէութեան եղանակը Ռուսաստանի վերաբերմամբ: Մինիստր Կրայլսհէյմ պատասխանեց, որ գերմանական արտաքին քաղաքականութեան ղեկավարութիւնը գտնվում է փորձված պետական գործիչի ձեռքում: Ռուսաստանը այնքան նշանաւոր քաղաքական փակտոր է, որ բոլոր նշանաւոր հարցերի քննադատութեան ժամանակ ուշադրութեան են առնվում դէպի վերոյիշեալ պետութեան հետ ունեցած յարաբերութիւնները:

ՎԻԷՆՆԱ, 18 հոկտեմբերի: Հակասեմիտ Լիւգէր Վիէննայի բուրգոմիստր է ընտրված:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: «Свѣтъ» լրագիրը հաղորդում է, որ ֆրանսիական գրականագէտների և ժուրնալիստների մասնաժողովը Վ. Կոմարովի անունով ուղարկեց մի շքեղ հրատարակութիւն «Ոսկէ գիրք», նուիրված կայսր Աղեքսանդր III-ի յիշատակին, խնդրելով դնել գիրքը կայսրի դամբարանի վրա:

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ, 19 հոկտեմբերի: Միլիօնատէր Կարլ Դուրանտէ սնանկ է յայտարարված:

ՊԱՐԻԶ, 19 հոկտեմբերի: Հանրապետութեան նախագահը պաշտօնապէս առաջարկեց Բուրժուային՝ նոր մինիստրութիւն կազմակերպել: Բուրժուան խոստացաւ պատասխանել այսօր առաւօտ:

Կ. ՊՕԼԻՍ, 19 հոկտեմբերի: Բ. Դուռը շրջաբերական հրատարակեց, որի մէջ յայտարարում է, որ նահանգներում տեղի ունեցած խառնակութիւնների պատճառը հայերն են, և որ կարգը վերականգնված է:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Հոկտեմբերի 19-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	85 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	25 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	$77^{1}/_{2}$ »
Ոսկի — — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպօններ — .	148 »	— »
Արծաթ — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	$6^{1}/_{2}$ — $7^{1}/_{2}$%	
4% պետական ռէնտա	$98^{3}/_{8}$ »	— »
5% ոսկեայ ռէնտա 1884 թ. . .	160 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	270 »	50 »
— — երկրորդ —	232 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	211 »	— »
5% պետական երկաթուղ. ռէնտա.	101 »	— »
4% ներքին փոխառութեան . . .	$97^{5}/_{8}$ »	— »
$4^{1}/_{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	99 »	75 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
$4^{1}/_{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	99 »	75
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	100 »	25 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100 »	50
Օդէսայի — —	$100^{3}/_{8}$ »	— »
Թիֆլիսի — —	97 »	50 »
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101 »	50
— — — 5% . .	$99^{1}/_{2}$ »	—
— — Քութայիսի 6% . .	$101^{1}/_{2}$ »	—
— — — 5% . .	99 »	50

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻ հայոց ս. Աստուածամօր եկեղեցում տիրացուի կարիք չը կայ. իսկ եթէ լինէր՝ յայտարարութիւնը տար կամ եկեղեցու բարեկարգիչ գործակալ քահանան կամ երէցփոխը, որոնց իսկ պարտականութիւնն է:

Տիրացու Մինաս Տէր-Մինասեան
1—1

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է մի փորձված
ՀԱՅ ԲԺԻՇԿ

Պայմանների մասին թող դիմեն գիւղի տանուտէրին այս հասցէով. Верхніе-Акулисы. Старшинѣ Микаелянцу.
(№ 121) 1—6

«ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ» հրատարակութեամբ օրերս լոյս կը տեսնեն
ՍՐԲԱԶԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
Ֆօտօ-գրավիւր նկարից
ԱՄԵՆԱՅԱՋՈՂ ՊԱՏԿԵՐԸ, սրբազանի ինքնագիր մակագրութեամբ:

Գինը, ճանապարհածախսով, 12 կօպէկ, 1000-ը 75 րուբլի, 500-ը 40 րուբլի, 100-ը 10 րուբլի:
Հասցէն՝ ТИФЛИСЪ, «Агбюръ-Таразъ»:
(№ 121) 1—5

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի հայ հասարակութեան, որ Թեմիս սրբազան առաջնորդը, հոկտեմբերի 22-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին կատարելու է, ՍԻՃԱԼԱՅ ՍԻՍԱՆԻ հայոց նորակառոյց սուրբ Աստուածածին եկեղեցւոյ օրհնութեան և օծման նաւակատեաց հանդէսը:

Հոգաբարձու Վասիլ Շերմազանեանց
(№ 120) 2—2

ԼՈՒՍԱՅ
ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ
ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ
ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ.

Դիմել այս հասցէով Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում: ԲԱԳՈՒ ծախվում է Շիրազեանցի գրախանութում:
(№ 64) 2—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒԴԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒԴԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—$6^{1}/_{2}$—7 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Նորերս թօքախտից վախճանվեց, երիտասարդ հասակում, ԱՐԳԱՄ ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆ: Երիտասարդը իր համար նպատակ էր դրել բանալ իր հայրենի Դաւալու գիւղում մի ԴԵՂԱՏՈՒՆ և մի ժողովրդական ԳՐԱԴԱՐԱՆ: Այդ նպատակով սովորում էր դեղագործութիւն, և աշխատում էր գրքեր հաւաքել ապագայ գրադարանի համար: Սակայն մահը վերջ տուեց այդ բոլորին:

Նրա մահից յետոյ մնացել են մօտ 400 ԿՏՈՐ ԳԻՐՔ, որը նա պահ էր տուել իր բարեկամներից մէկին: Հանգուցեալի բարեկամները որոշել են այդ գրքերը, յանուն հանգուցեալ Տէր-Խաչատրեանի, մաս-մաս նուիրել հայոց աղքատ դպրոցներին: Ուստի այն դպրոցները, որոնք կը կամենան օգտվել այդ գրքերից, թող շտապեն ուսուցչական խմբի կամ հոգաբարձուների կողմից ուղարկեն իրանց առաջարկութիւնը, հասցէի հետ միասին: Գրքերը ուղարկելու ճանապարհածախսը դպրոցների վրա է:

Պէտք է դիմել այդ հասցէով՝ ТИФЛИСЪ, Хачатуру Малумянъ. (№ 121) 1—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՏԸՆԵԱՆ
ԿԵՆԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
Գրեց Հ. Գաբրիէլ Վ. Մենէվիշեան

Վիէննա, Մխէթարեան տպարան 1895. 8°, 48 երես և 4 պատկեր, կարժէ 1 ֆրանկ կամ 35 կօպէկ: Կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Կ. Մութաֆեանի գրատնեակում, Յ. Ջաթալպաշեանի մօտ, Ա. Սարուխանեանի մօտ և կենտրօնական գրավաճառանոցում: Կարելի է դիմել և «Հանդէս Ամսօրեայ» խմբագրութեան՝ VIENNE, Autriche, VII Mechitharistengasse 4.
(№ 121) 1—6

Պատիւ ունեմ յայտնելու կովկասի պ.պ. վաճառականներին, որ ես լինելով մշտապէս ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, յանձն եմ առնում և կատարում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մանաւանդ կաշուեղէն ապրանքներ և նոյնպէս կարած ոտնամաններ առնել, քանի որ այդ գործի հետ ես լաւ ծանօթ եմ:

Իմ հասցէն՝ ВАРШАВА, Переѣздъ, домъ № 9, ТОВМАСЪ ЯРГУЛЯНЦЪ.
(և. շ.) (№ 116) 5—10

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ
Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետևեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների:

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻԻ, ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՒՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբօմը, նմանապէս և ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծադիր 3 րուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 րուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կօպէկ:

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է: (№ 117) 3—10

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 րուբլի:
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՌՕՍՍԻԱ“ ընկերութիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինք) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՌՈՒԲԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռօսսիա“ ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 րուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թւի յունվարի 1-ին „ՌՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 րուբլի դրամագլխով:

Տղայ ԵՐԵԽԱՆԵՐԻ համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:
(№ 71) (շ.) 8—52

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Октября 1895 г. Типографія Канцел. Главноначал. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.